

A.G.B. UNION

V. YUZBASHIAN - K. GULBENKIAN
ARMENIAN SCHOOL

Tel. : 4775261 - Fax : 4740550

P.O.Box 186 Jabal Al-Ashrafieh

Amman 11118 Jordan

Հ.Բ.Ը.Ս.

ՎԱՀՐԱՄ ԻԻԶՊԱՇԵԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ
ԳԱԼՈՒՍՏ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ
ԱՄՄԱՆ, ՅՈՐԴԱՆԱՆ

المدرسة الأساسية

للجمعية الخيرية العمومية لطوائف الأرمن
ف. يوزباشيان - ك. كولبنكيان

تلفون : ٤٧٧٥٢٦١ - فاكس : ٤٧٤٠٥٥٠

ص.ب ١٨٦ جبل الاشرفية

عمان ١١١١٨ الاردن

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՍՓԻԻՌԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ
ՏԿՆ. ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈՒԲԵԱՆ
ԵՐԵՒԱՆ

15 - 08 - 2011

Ամման

Մեծարգոյ Տկն. Յակոբեան,
Սոյն նամակով Ամմանի Վահրամ Իւզպաշեան եւ Գալուստ Կիպալէնկեան
Ազգային Վարժարանի Տնօրէնութիւնն ու Ազգ. Տեղ. Խորհրդի Կրթական
Յանձնախումբը իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն Ձեզ, ողջ
հայրական նկատմամբ Ձեր ցոյց տուած զոհողութեան եւ նուիրածութեան
համար, զոր դուք կը կատարէք ամենայն նախանձախնդրութեամբ:
Մեծարգոյ Նախարարուհի, ԱՌԻ ՏՈՒՆ ծրագրին Վարժարանիս
մասնակցութիւնը իր 14 շրջանաւարտներով, որը տեղի ունեցաւ 9 Յուլիս-ին մինչեւ
24 Յուլիս 2011-ը, պատմական միջոցառում հանդիսացաւ Յորդանանահայ
Գաղութիս համար: Այդ բացատրութիւններն ու նկարագրութիւնները զորս կը
լսենք մասնակցողներուն կողմէ կարօտի յուզում եւ ներշնչանք կը պատճառեն
մեր հոգիներուն:

Այդ բոլոր բացառիկ առիթները զորս վայելցին մեր կրտսերները, այդ բոլոր
գեղատեսիլ վայրերը որոնց ականատես եղան մեր փոքրերը, մենք կը պարտինք
Ձեզ եւ Ձեր օժանդակ պատասխանատու անձերուն: Կսենք Ձեզ, որովհետեւ
ազգային ժիր պատասխանատուութիւնը դուք իրացուցած էք ի ծնէ, եւ մենք այդ
կը վերագրենք որպէս Աստուածային շնորհք եւ օրհնութիւն:

Մեր անչափ շնորհակալութիւնը կը յայտնենք այդ բոլոր հիպընկալ
ընտանիքներուն, որոնք եղան հոգատար, բարեացակամ եւ հարազատ ծնողներ
մեր կրտսերներուն:

Այս առիթով մենք կը դրուատենք եւ կը գովերգենք Հ.Հանրապետութեան մեր
Իշխանութիւնը, մեր Հայրենիքի անկախ պետականութեան 20-րդ տարեդարձի առ
իթով, ինչպէս եւ կը մաղթենք որ մեր Հայրենիքը գտնուի բարեզարդման,
կայունացման եւ անսասանութեան վէի ընթացքի մէջ:

Լաւագոյն մաղթանքներով

Ի դիմաց

Վ. Իւզպաշեան եւ Գալուստ Կիպալէնկեան
Ազգային Վարժարանի Տնօրէնութեան

Անդրանիկ Լեւիճեան
Կրթ. Յանձն.ի Պատասխ.

Ռաբէլ Մարգարեան
Վարժարանիս Օգնական Տնօրէն



Handwritten signature: R. Margaryan

